ՀԱՅԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻՆ ԿՈՎԿԱՍՅԱՆ ՃԱԿԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

ՄՈՒՐԱԴ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Առաջին աշխարհամարտին, համաձայն պաշտոնական տվյալների՝ Ռուսական կայսրությունում բնակվող յուրաքանչյուր 100 հայից 13-ը զորակոչվեց բանակ: Կայսրությունում բնակվում էր 2 միլիոն 54 հազար հայ, նրանցից 250000-ը զինվորագրվեց ռուսական բանակ:[1] Հայ զինվորների զգալի մասը մարտնչում էր Կովկասյան ռազմաճակատում: Այս ճակատում թուրքական զորքերի դեմ կռվում էին նաև ռուսական բանակի կազմում պատերազմի սկզբից ստեղծված հայ կամավորական խմբերը (դրուժինաները)՝ Անդրանիկի, Դրոյի, Համազասպի, Քեռու, Վարդանի, Հովհաննես Ջամփոլադյանի, իշխան Հովսեփ Արղությանի գլխավորությամբ:

Հայերի այդպիսի ակտիվությունն ուներ իր հիմնավոր պատճառները: Այդպես՝ ի պատասխան ռուսական կառավարության հայասիրական հայտարարությունների՝ Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցը տեղեկացնում էր հայ կամավորական համաժողովրդական շարժման և Ռուսաստանի շահերի սատարման հարցում հայության պատրաստակամության, հայերի մեջ արմատավորված այն համոզման մասին, որ միայն Ռուսաստանը կարող է ապահովել իրենց ֆիզիկական և մշակութային զարգացումն Արևմտյան Հայաստանում: Կովկասի փոխարքա, հեծելազորի գեներալ Վորոնցով-Դաշկովին 1914թ. օգոստոսի 5-ին հղած իր նամակում Վեհափառը հավաստիացնում էր, որ «հայ ժողովուրդը, մոռանալով սեփական վերքերից եկած զգացմունքը, իր բոլոր մտքերը կենտրոնացրել է Հայրենիքի վրա, որի փառքի համար նա ոգևորությամբ արձագանքեց իր թագավորի կոչին՝ կատարել իր սուրբ պարտականությունը Նորին Կայսերական Մեծության և Հայրենիքի առաջ»:[2] 1914թ. հունվարի 26-ի ռուս-թուրքական համաձայնագրով նախատեսվող բարենորոգումները, Վեհափառի կարծիքով, պետք է կատարվեին Ռուսաստանի հովանավորությամբ և, ի շարս այդ բարենորոգումների, Ռուսաստանի ընտրությամբ նշանակված քրիստոնյա կառավարիչների գլխավորությամբ հայկական վեց վիլայեթներում պետք է ստեղծվեր մի անքաժան նահանգ՝ քրիստոնյաների և մահմեդականների հավասար ներկայացուցչությամբ:

Նույն օրը Վեհափառը մեկ այլ նամակով փոխարքային խնդրում էր միջնորդել այսպես կոչված «դաշնակցության գործով» 1906-1910թթ. բանտարկված դաշնակցական գործիչների ազատ արձակման համար: Դիմումին կցված էին 180 գործիչների ազգանուններ:[3] Վեհափառի դիմումը կառավարությանը ներկայացնելով՝ փոխարքան իր կողմից ավելացրել էր. «Ռուսաստանի համար ծանր պայմաններում կովկասահայությունը երկրամասում ամենուր դրսևորում է հայրենասիրական բարձր տրամադրություն՝ ոգևորությամբ ընդունելով զորահավաքի հարցը և զորամասեր մտնելով»: Ու նաև. «... ճանաչված հայեր ափսոսանք են հայտնում, որ հայերը նշանակվում են Արևմտյան սահմաններում,մինչդեռ կցանկանային գնալ թշնամու դեմ»:

Տեղեկացնելով Վեհափառին օգոստոսի 5-ի նրա նամակի կապակցությամբ Ռուսաստանի կառավարության պատասխանի մասին՝ Վորոնցով-Դաշկովը գրում էր. «Այժմ ստատս-քարտուղար Գորեմեկինը տեղեկացնում է ինձ, որ ռուսական կառավարությունը ոչ մի դեպքում ոչ մի զիջում չի անի Հայկական հարցում, այն իմաստով, որ Թուրքիայի հայկական նահանգներում բարեփոխումները կկատարվեն ռուսական սկզբնական ծրագրով և Ռուսաստանի բացառիկ վերահսկողությամբ»:[4]

1914թ. նոյեմբերին Կովկաս ժամանած կայսր Նիկոլայ 2-ը Վեհափառի հետ հանդիպման ժամանակ նրան վստահեցրել էր, որ «Հայկական հարցը կլուծվի հայերի սպասումների համաձայն»: Նրա հավաստումն, անշուշտ, նպատակ ուներ՝ օգտագործել հայ ժողովրդի ռուսամետ կողմնորոշումը, շահել արևմտահայության համակրանքը: Նոյեմբերի 24-ին թուրքահայերին ուղղված կոչում կայսրն երաշխավորում էր «Հայաստանին ինքնավարություն Արևմտյան Հայաստանի վեց վիլայեթների սահմաններում և նրանց հետ անխզելիորեն կապված Կիլիկիայում, մեծ Ռուսաստանի հզոր հովանու տակ, ինչին պետք է հասնել դաշնակիցների հետ հատուկ համաձայնությամբ»: «Թուրքահայերի բախտը սերտորեն կապված է մեր հաղթանակի հետ, և նրանք պետք է ամեն կերպ օգնեն մեր կողմից վերջնական հաղթանակի նվաճմանը, ինչը զգալիորեն կհեշտանա տեղական բնակչության ակտիվ համագործակցության շնորհիվ»[5], ասվում էր կոչում:

Կովկասում կամավորական շարժմանն ամենաակտիվ մասնակցություն հանդես բերեցին ինչպես կովկասահայությունը, այնպես էլ արևմտահայությունը: Ինչպես գրել է Վահան Փափազյանը (Կոմս). «Թուրքահայ և կովկասահայ երիտասարդությունը դաշնակցության դրոշները ափ առած էր, կպահանջեր հրապարակ իջնել և ձեռք առնել կամավորական գունդեր կազմավորելու գործը: Ամեն կողմէ բարոյական ճնշում կդրուէր դրական կերպով լուծելու գունդերու խնդիրը և ստանձնել կազմակերպության ղեկավարությունը»:[6] Թիֆլիսում նման ակտիվություն նկատել է նաև Կարո Սասունին: «Կովկասահայության ոգևորության ալիքը իր գագաթնակետին էր հասել»[7], - գրել է նա:

Կամավորական շարժումը և Թուրքիայի դեմ պատերազմին իրենց մասնակցությունը բերելու մղումը լայն ծավալում ստացավ արտասահմանյան հայ համայնքներում՝ Եգիպտոսում, Կիպրոսում, Ֆրանսիայում, ԱՄՆ-ում, ամենուր, ուր ապրում էին հայեր: Հայկական գաղթօջախներում՝ հայրենիքի ազատագրման համար կամավորական շարժման մեջ ներգրավվելու երիտասարդության մղումի մասին Հ. Երեմյանը գրում էր. «Տուն, գործ,

քոլեջ կամ համալսարան կլքեն, դեպի Հայաստանի ռազմաճակատ վազելու աճապարումով»:[8]

Կամավորական շարժմանն, առաջին իսկ օրերից, իր ակտիվ մասնակցությունը բերեց նաև հայ մտավորականությունը՝ Հ. Թումանյանը, Ա. Շիրվանզադեն և այլ մեծեր: Առաջին աշխարհամարտի ռուս-թուրքական կովկասյան ճակատում ռուսների կողմից հայերի հանդես գալը Հ. Թումանյանը դիտում էր որպես «ավանդական երրորդ զարկ», գտնելով, որ «երրորդ զարկն է որոշում, վճռում խնդիրը»: «Երրորդ զարկով հյուսիսի հսկան, մեծ Ռուսաստանը վճռում է հայոց ազգի հին, արյունոտ խնդիրը, ապահովում է նրա ապագան և առաջնորդում է դեպի ազատ ազգերի եղբայրությունը», - գրում էր Թումանյանը:[9] Ժողովրդին քաջալերող ազդակ էր նաև 1914թ. նոյեմբերի 3-ին Բաքվում գրած և նոյեմբերի 5-ին տեղի «Արև» թերթում հրապարակած «Վերջին տագնապը»[10] բանաստեղծությունը: Նրանում արտահայտված է թուրքական լծից ազատվելու հայերի իղձը, այդ հարցում Ռուսաստանի պատմական առաքելությունը:

Հայ մտավորականությունն իր հայրենասիրական պարտքն էր համարում, բացի ռազմաճակատ մեկնելուց, նաև տեղում կամավորներին ու զորականներին ոգևորելն ու սատարելը, լայն հասարակայնությանն իրավիճակի ճիշտ ներկայացնելը: Հայ կամավորներին բարոյապես սատարելու համար ռազմաճակատ մեկնեցին Հովհաննես Թումանյանը, Ալեքսանդր Շիրվանզադեն, Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի տեսուչ Հովսեփ Խունունցը, Թիֆլիսի Վերայի վանքի քահանա Նիկողայոս Բավոյանը, Երևանի քաղաքագլուխ Սմբատ Խաչատրյանը: Խումբը գլխավորում էին Մեսրոպ և Խորեն եպիսկոպոսները:[11] Մտավորականների խումբը Էջմիածնից անցավ Իգդիր, Կարս, Բայազետ, Ալաշկերտ, Բասեն, Դելիքաբա, Խորասան, Զևին, մի շարք ոգևորող հանդիպումներ ունեցավ կամավորների և նրանց հրամանատարների հետ:

Սկզբնապես հայերին թույլատրվեց կազմավորել չորս կամավորական խումբ՝ 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ: Նախնական ծախսերի համար հատկացվեց 3500 ռուբլի գումար, ռազմական ֆոնդից բաց թողնվեց ևս 5100 ռուբլի, որից 4500-ը տրվեց Թիֆլիսի քաղաքագլուխ Ա. Խատիսյանին, որն այդ ժամանակ նաև ազգային Բյուրոյի նախագահի տեղակալն էր: Սահմանվեց նաև պետական գանձարանից յուրաքանչյուր կամավորի համար ծախսերի, այդ թվում և ամսական ռոճիկի, չափը: Խմբի անձնակազմը, որը պահվելու էր պետական գանձարանի հաշվին, չպետք է գերազանցեր 1-ին խմբում՝ 1200, իսկ 2-րդում, 3-րդում և 4-րդում՝ յուրաքանչյուրում 400 մարդուց:[12]

Հայկական կամավորական չորս խմբերում, կազմավորման պահին, կար 2400 մարդ: Ռուսական բանակի գերագույն գլխավոր հրամանատարի 1915թ. ապրիլի 7-ին հ. 155 հրամանով խմբերը համալրվեցին, հաստատվեց խմբերի նոր կազմ՝ յուրաքանչյուրում չորս վաշտ, հետախույզների ջոկատ, ընդամենը 948 կամավոր, որից 42-ը՝ սպա: Նույն թվականին գերագույն գլխավոր հրամանատարի հրամանով, կազմավորվեցին ևս երեք խումբ (5-րդ, 6-րդ և 7-րդ). հայկական կամավորական խմբերի թիվը հասավ յոթի, որոնցում ընդգրկված էր մոտ 7000 կամավոր:[13]

1914-1916թթ. Կովկասյան ճակատի մարտական գործողություններում աչքի ընկան հատկապես 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 6-րդ կամավորական խմբերը: 1914թ. սեպտեմբերի 23-ից մինչև 1916թ. հունիսի 1-ը, հայկական

2-րդ խումբը (հրամանատար Դրո) մասնակցել էր ավելի քան 40 տարբեր մարտերի ու մի շարք այլ ընդհարումների[14], նույն ժամանակահատվածում 4-րդ հայկական խումբը (հրամանատար Քեռի) ունեցել էր 60 տարբեր մարտեր, որոնցից 36-ը՝ Արևմտյան Հայաստանում, իսկ 24-ը՝ Պարսկաստանում՝ Սուլդուզի ռուսական զորաջոկատի կազմում:[15]

Հայ կամավորական խմբերը բացառիկ խիզախություն ու ռազմական հմտություն դրսևորեցին պատերազմի առաջին շրջանում՝ մեծապես օգնելով Կովկասյան ճակատում ռուսական բանակի հաղթանակներին, մասնավորապես՝ Արևմտյան Հայաստանի ազատագրման գործին:

Ռուսական հրամանատարությունը բարձր է գնահատել հայ կամավորական խմբերի մատուցած ծառայությունը, քանի որ դրանով հայ կամավորները մասնակիորեն ազատում էին որոշակի ռազմական պարտականությունից ռուսական զորմասերին, որոնք զբաղված էին արագ տեղաշարժեր պահանջող տակտիկական բազմաթիվ այլ գործողություններով: Կատարելով առաջապահ, հետախուզական և պահակազորային ծառայություններ՝ կամավորական խմբերն ակտիվ մասնակցություն ունեցան Սարիղամիշի, Դիլմանի, Շեյխին Գյարուսիի, Ռևանդուզի և այլ ճակատամարտերին, Բերկրի-Կալայի, Մոկսի, Վանի, Խնուսի, Քիթլիսի, Մուշի, Էրզրումի ազատագրմանը և արժանացան ռուսական բանակի հրամանատարության գովասանքին, կառավարական պարգևների, շքանշանների: Միայն 2-րդ կամավորական խմբի անձնակազմից (հրամանատար Դրո) 1914թ. հոկտեմբերի 23-ից մինչև 1916թ. հունիսի 1-ն ընկած ժամանակահատվածում Գեորգիյան խաչով պարգևատրվեց 76 կամավոր (որից երկուսը առաջին աստիճանի), 138 հոգի պարգևատրվեցին մեդալներով:[16] Մարտական գործողություններին ակտիվորեն մասնակցելու համար Գեորգիյան խաչի 2-րդ և 4-րդ աստիճանի շքանշաններով պարգևատրվել էին նաև Արարատյան զորաջոկատի կազմի մեջ մտնող (2-րդ, 3-րդ, 4-րդ խմբեր) տասնյակ կամավորներ:[17] Ռազմի դաշտում զոհվեց ավելի քան 700 կամավոր:[18]

Դեռևս 20-ական թվականներին, տիրող գաղափարախոսության կողմից հայկական կամավորական շարժումը որակվեց որպես ազգայնական շարժում, որը գալիս էր նպաստելու համաշխարհային հեղափոխական շարժման ամենամեծ խոչընդոտի՝ ռուսական ցարիզմի նվաճողական ու գաղութատիրական քաղաքականությանը: Ու չնայած առանձին դեպքերում անուղղակիորեն նշվում էր, որ կամավորական շարժման շարքային մասնակիցներն առաջնորդվում էին ազնիվ, հայրենասիրական մղումներով, սակայն շարժման նպատակները շարունակվում էին որակվել որպես ազգայնական, իսկ շարժման կազմակերպիչները և ղեկավարները՝ որպես ցարիզմի գործակալներ ու կամակատարներ: Այսպես, «Կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր» կոլեկտիվ աշխատության մեջ ասված է. «Հայ բուրժուազիայի քաղաքական պարտիաները՝ դաշնակցությունը, կադետները և մյուսներն անվերապահ կերպով լծվեցին Անտանտի իմպերիալիստների ռազմակարգին: Նրանք ցարական կառավարության գիտությամբ ու նյութական օժանդակությամբ կազմակերպեցին խմբեր և դրանք դրեցին ռուսական Կովկասյան բանակի հրամանատարության տրամադրության տակ... Կողմնորոշվելով դեպի ցարիզմի ռազմաքաղաքական պլանների իրագործումը, կամավորական շարժման կազմակերպիչները՝ արևելահայ բուրժուազիան և նրա մարտական պարտիան՝ դաշ-

նակցությունը, նորից բռնում են արևմտահայ ժողովրդի ազատագրման այն սխալ և ավանտյուրիստական ուղին, որ անցյալում այնքան դաժան փորձանքներ էր բերել արևմտահայ ժողովրդին»:[19]

Խորհրդահայ պատմագիտությունն ընդունում էր, որ Արևմտյան Հայաստանի ազատագրումը հուզում էր ողջ հայ ժողովրդին: Նշելով, որ հազարավոր մարդիկ պատրաստ էին կյանքի գնով օգնել իրենց եղբայրների ազատագրմանը թուրքական բռնակալության դաժան լծից և, որ բոլշևիկները հասկանում էին, որ կամավորական շարժմանը մասնակցող շարքային զինվորները տոգորված էին արևմտահայերի ազատագրման ազնիվ նպատակով, խորհրդային հայ պատմագիտությունն ընդգծում էր, որ բոլշևիկները կանխատեսում էին նաև այն վնասակար հետևանքները, որ ունենալու էր այդ շարժումը՝ անկախ նրա շարքային մասնակիցների նպատակներից և կամքից: Հեղինակների եզրակացությունն էր. «Հետագա դեպքերը ցույց տվին, թե որքան արդարացի էին բոլշևիկները, և որքան կործանարար էր պատերազմի տարիներին հայ նացիոնալիստների որդեգրած ուղեգիծը: Օգտագործելով պատերազմական իրադրությունը, երիտթուրքերի կառավարությունը, գերմանական իմպերիալիստների հովանավորությամբ, որոշեց կենսագործել արևմտահայերի ֆիզիկական բնաջնջման իր նախապես մշակված հանցավոր ծրագիրը մի այնպիսի ծավալով, որն անօրինակ է նույնիսկ թուրքական բռնակալության պատմության համար»:

Նման եզրակացության հետ համաձայնել չի կարելի. հայերի ցեղասպանությունը և կոտորածները չի կարելի վերագրել կամավորական շարժումներին և այդ առիթով առաջացած «թուրքական ցասումին»: Դա պատմական երևույթների գնահատման խեղաթյուրում է: Չպետք է անտեսել թուրք կառավարողների պանթուրքիստական և պանթուրանական նկրտումները, թուրքական «աշխարհն անհավատներից» մաքրազարդելու, նրանց թուրքացնելու մոլուցքը. «Մեր կրոնական զգացմունքները թելադրում են մեզ ազատել իսլամական աշխարհն անհավատների տիրապետությունից», - ազդարարում էր երիտթուրքերի կուսակցության կենտրոնական վարչությունը 1914թ. նոյեմբերի 12-ին տարածած շրջաբերականում:[20]

Հայերի տեղահանումները, կոտորածները, ցեղասպանությունը, ընդգծում է Հ. Ավետիսյանը, «եղել են օսմանիզմի, համաթուրքիզմի, երիտթուրքերի հայաջինջ քաղաքականության հետևանք, կամավորական և ֆիդայական շարժումները մուծվել են ոչ թե դրսից, հրահրվել օտարի կողմից, այլ հանդիսացել են հայ ժողովրդի պատմական տենչերի, ազգային-ազատագրական ձգտումների, բռնության դեմ ցասման ինքնաբուխ արտահայտություն: Այդ շարժումների շնորհիվ էր, որ փրկվեց արևմտահայության 1/3-ը»:[21] Գերմանական հասարակական գործիչ, հոգևորական Էվալդ Շտիրը նշել է, որ հայերի շարժումը ոչ այլ ինչ է, եթե ոչ իրենց ազգակիցներին բռնությունից, կոտորածներից, իսլամացումից ապահովելու միջոց: «Եվ եթե հայերը դիմեցին ինքնապաշտպանության և հայացք ձգեցին ռուսների վրա, որոնց շարքերում կռվում էին ռուսահայերը, դա իհարկե հասկանալի էր», - գրել է Շտիրը 1917թ. նոյեմբերի 14-ին հրապարակված «Հայկական հարցի առթիվ» հոդվածում: Դա պատասխան էր 1917թ. սեպտեմբերի 24-ի «Միություն և առաջադիմություն» կուսակցության համագումարում Թալեաթ փաշայի առաջ քաշած այն կեղծիքին, թե հայերի կոտորածները եղել են նրանց անհնազանդության, ռուսական կողմնորոշման, ար-

տասահմանից եկած հորդորանքների և քաջալերումների հետևանք: Ժխտելով հայերի տեղահանումները պատերազմի տրամաբանությամբ կատարված լինելու մասին թալեաթյան վարկածը, Շտիրը նշում էր, որ հայերի տեղահանումները եղել են նաև Կիլիկիայում, որը պատերազմական թատերաբեմ չի եղել, ապացուցում, որ տեղահանումների և նրա հետևանքների մեղքն ամբողջովին ընկնում է Թուրքիայի կենտրոնական կառավարության վրա, և որ Թալեաթի մեկնաբանությունները «... հասարակական կարծիքը մոլորեցնում էին»:[22]

1915թ. Հայոց ցեղասպանությունը և կոտորածների դրդապատճառները կամավորական շարժմանը և իրը՝ այդ առիթով առաջացած «թուրքական ցասման»-ը վերագրելու տեսակետը ժխտել են նաև Կովկասում ծառայող շատ ռուս զինվորականներ: Նրանցից մեկը՝ գլխավոր շտաբի կապիտան, կովկասյան բանակի դաշտային վարչության հետախուզական բաժանմունքի պետ Դրոցենկոն (հետագայում գեներալ-մայոր) գրել է. «Թուրքիան հայերին կճնշի և կնեղի թե՛ պարտության դեպքում, թե՛ հաղթանակի դեպքում: Առաջին դեպքում մուսուլմանները նահանջելով հայերին կկոտորեն վրեժից, երկրորդ դեպքում՝ հարձակվելով Ռուսաստանի վրա նրանք հայերին կոչնչացնեն իրենց փայփայած նպատակին հասնելու համար»: Հետախույզը վկայակոչում էր Բալկանյան պատերազմների ժամանակ թուրքական գործելակերպը, նման մեթոդների կիրառումը և թուրքերի անպատժելիությունը: Թուրքերը հայերին դիտում են իբրև թուրքերին և թաթարներին միաձուլվելուն խանգարող տարր, նշում էր Դրոցենկոն, բացատրելով, որ այդ է պատճառը, «որ թուրքական ոչ մի սահմանադրական կառավարություն չի վերացրել հայերին ոչնչացնելու համիդեական կարգախոսը»: Մանրամասնելով, որ թուրքական նման մոտեցումը խրախուսում և սատարում է Գերմանիան, Դրոցենկոն ընդգծում էր, որ Ռուսաստանի հարավում «թուրք-թաթարական հոծ պատնեշի առկայությունը նրանց համար շահեկան է»: Թուրքերի կողմից հայերի կոտորածների վտանգը նվազագույնի հասցնելու համար ռուսական սպան գտնում էր, որ պետք է լայնորեն կազմակերպվի նրանց սպառազինումը: Դա, ըստ Դրոցենկոյի, բխում է և՛ հայերի, և՛ Ռուսաստանի շահերից: Դրոցենկոյի եզրակացությունը միանշանակ էր. «Եթե Ռուսաստանի համար շահեկան չէ օսմանների փառքի և հզորության վերածնունդը, շահեկան չէ, որպեսզի թույլ տա, որ ուժեղացած Թուրքիան դառնա Առաջավոր Ասիայի ողջ մուսուլմանների համար Եվրոպայի ճնշումից ազատագրության և անկախության խորհրդանիշը, ապա առավել օգտակար միջոցներից մեկը կլինի հայերին սատարումը և Թուրքիայի սահմաններում նրա ֆիզիկական և կուլտուրական ամրապնդումը: Այդ իսկ պատճառով, հենց Ռուսաստանի համար անօգուտ չէր լինի թուրքահայերին բավական չափով զենք մատակարարելը»:[23]

Պատմագրության վերջին շրջանի նվաճումները, արխիվային նոր նյութերի անաչառ ուսումնասիրություններն ու հրապարակումները մերժում են թուրք պատմաբանների, քաղաքագետների, դիվանագետների, ի կրկնություն Թալեաթի, Ջեմալի և այլոց «մտքերի», պնդումները, իբր կամավորական շարժումները պատճառ հանդիսացան հայերի կոտորածների: Դրանք ժխտում են նաև առանձին հայ պատմաբանների, հրապարակախոսների, դիվանագետների՝ քաղաքական կոնյունկտուրայից բխող հետևությունները, ինչպես օրինակ Գ. Լազյանի հետևյալ եզրակացությունը. «Այս կամ այն չափով կամավորական շարժումը պատճառ ծառայեց

թուրքերուն համար որպեսզի կատարուի հայերու տարագրությունը և որպեսզի մեկ միլիոն զոհեր տանք»:[24] Գ. Լազյանը և մյուսները մոռանում են Թուրքիայի՝ Գերմանիայի կողմից պատերազմի մեջ մտնելու հիմնական՝ պանթուրանական ընդհանուր պետություն ստեղծելու նպատակի, 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբների նրանց հայահալած քաղաքականության փաստերի մասին:

Հիշատակենք Հայոց ազգային բյուրոյի երկու փաստաթուղթ: Մեկն Ազգային բյուրոյի նախագահ Հ. Խունունցի զեկուցագիրն է, մյուսը՝ Նիկոլ Աղբալյանի՝ 1917թ. հոկտեմբերի 10-ի զեկուցումն ազգային համախորհրդակցության նիստում:[25] Հ. Խունունցը երախտագիտությամբ հիշում է այն ծառայությունը, որ կամավորները մատուցել են հայ տառապյալ ժողովրդին՝ Տաճկահայաստանի և Պարսկաստանի մեր տարաբախտ գաղթականներին ուղեկցելով դեպի կովկասյան սահմանը:[26]

Ն. Աղբալյանն ազգային համախորհրդակցության հոկտեմբերի 10-ի նիստում «որպես ականատես հարկ համարեց մտքեր բանաձևել այդ շարժման մասին»: Ն. Աղբալյանի բանաձևում հիմնական դրույթները հանգում են հետևյալին. երբ ակնհայտ դարձավ, որ Թուրքիան որպես հակառակորդ պատերազմում է հայերի դաշնակիցների դեմ, այդ ժամանակ, ինքնաբերաբար, շարժում սկսվեց հայկական բոլոր խավերում: Կամավորներ երևացին անգլիական և ֆրանսիական բանակներում: Կամավորական շարժում սկսվեց նաև դեպի ռուսական բանակը: Ցրիվ, անկազմակերպ շարժմանը որոշակի ուղղություն տալու համար ստեղծվեց համահայկական ազգային կենտրոն՝ Կարգադրիչ մարմին: Ըստ Ն. Աղբալյանի բնորոշման՝ կամավորական շարժումն ապրել է երկու փուլ՝ սկզբից մինչև 1915թ. ապրիլը և, մյուս շրջանը, մինչև 1916թ. մարտը՝ կամավորական խմբերի կազմացրումը և հայկական ազգային գումարտակների ստեղծումը: Կամավորական խմբերը ցույց են տվել զինված աջակցություն թե՛ ռուս պետությանը և թե՛ դաշնակիցներին, թե՛ պաշտպանողական, թե՛ հարձակողական կռիվներում լինելով միշտ առաջավոր դիրքերում: Նրանք կարևոր դեր խաղացին հատկապես Սարիղամիշի, Դիլմանի, Ռևանդուզի, Բերկրի-Կալայի, Բիթլիսի, Մուշի, Խնուսի, Վանի, Էրզրումի վճռական ճակատամարտերում:

Արձագանքելով, որ կամավորներն ապացուցեցին «հայերի զինվորական կազմակերպվածության ոգին, ժողովրդի հոգեկան կորովը», նրանց «հասարակական մեծ արժեքը, Հայոց վերածնության նախօրեին», Ն. Աղբալյանը կամավորական շարժման արդյունքներն ամփոփում է հետևյալ բանաձևով. «Այդ շարժումով հայ ժողովուրդն ապրեց ամբողջ երեք տարի: Դա բարոյական վերածնունդի տարեթիվ է հայ ժողովրդի համար: 10000-անոց անձնվեր բանակ հանել, մեր պատմության մեջ եզակի երևույթ է: Վերջին դարում, կորովազուրկ հայ ժողովուրդն առաջին անգամ էր այդքան մեծ, կազմակերպված ուժ և կորով ցուցաբերում: Նախքան կամավորական շարժումը, մենք ենթադրում էինք, թե կարող էինք պետականորեն կազմակերպվել և պաշտպանվել, իսկ հիմա մենք այդ բանի ապացույցն ունենք: Կամավորական շարժման մի շարք թերություններ նսեմանում են այս մեծ, դրական կողմերի առաջ, իսկ մնացածը պատկանում է պատմությանը»:[27] Մի կարևոր եզրակացություն ևս. կամավորական շարժումը ցույց տվեց, որ «հայ ցեղը կարող է կազմակերպված պաշտպանել իր երկիրը, ցուցաբերել ռազմական ոգի և ուժեղացնել հայի ինքնազգացումը»:[28] Կամավորական շարժումն իր մեծ նշանակությունն ունեցավ Հայկական հար-

ցը միջազգային հրապարակ հանելու գործում:[29] Հետաքրքիր է նաև Ս. Վրացյանի գնահատականը նույն համախոհությունում: «Կամավորական խմբերի վարիչները մեր ցեղի ազնվական կորովի վարիչներ են եղել», - ասել է նա, մատնանշելով դահիճում գտնվող Անդրանիկին և Դրոյին:[30]

Ընդհանրացնենք. 1915թ. հայկական կոտորածները թուրքերի կողմից պետական մակարդակով, նախօրոք ծրագրավորված ու կազմակերպված ցեղասպանություն էր և ոչ մի կապ չուներ կամավորական շարժման հետ: Փաստն այն է,որ հայ կամավորները շատ տեղերում կարողանում էին կանխել թուրքերին և, կոտորածներից փրկելով, Անդրկովկաս ուղեկցել տասնյակ հազարավոր հայերի: Այսպես. հայկական առաջին կամավորական խումբն, Անդրանիկի հրամանատարությամբ, նահանջելով Դիլմանի շրջանից, 1914թ. դեկտեմբերին ապահովեց այդ շրջանի մեծաքանակ հայ ազգաբնակչության գաղթը՝ Արևելյան Հայաստան, իսկ 2-րդ կամավորական խումբը, Դրոյի հրամանատարությամբ, նույն՝ դեկտեմբեր ամսին դուրս բերեց հայ ազգաբնակչությունը Ալաշկերտի դաշտավայրից, որի շնորհիվ թուրքական կոտորածներից փրկվեցին հազարավոր հայ կյանքեր:[31] 1915թ. հունիսի վերջին, ռուսական բանակի ընդհանուր նահանջի ժամանակ, նույն՝ 2-րդ հայկական խումբն ապահովեց նաև Բերկրիի ճանապարհով դեպի Կովկաս անցնող 200 հազար հայ գաղթականության անվտանգությունը: Բերկրիից նահանջելուց մեկ օր անց Դրոն՝ հեծյալ մի խմբով կրկին վերադարձավ Բերկրի և այստեղից Արևելյան Հայաստան հասցրեց մեծաքանակ հայ որբեր:[32]

Այսուհանդերձ, ցավոք, չնայած կամավորական խմբերի՝ արևմտահայության նկատմամբ ցուցաբերած այդ աջակցությանը, այնուամենայնիվ ոչ բոլոր արևմտահայերը հասցրեցին վերաբնակվել, իսկ որոշ գյուղեր էլ կամովին հրաժարվեցին միանալ գաղթականական շարժմանը և ենթարկվեցին թուրքական դաժան կոտորածների:

Կամավորական խմբերը, իրենց խնդիրը հաջողությամբ կատարելուց հետո, վերածվեցին հայկական կանոնավոր հրաձգային զումարտակների, որով և Կովկասյան ճակատում դրվեց հայկական կանոնավոր զինուժի հիմքը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] Տե՛ս Ղորղանյան Գ. Հայերի մասնակցությունը համաշխարհային պատերազմին Կովկասյան ռազմաճակատի վրա 1914-1917թթ., «Հայրենիք», թիվ 11-12, Բոստոն, 1927, էջ 12:

[2] Чалхушян Г. Красная книга, Ростов-на-Дону, 1919, с. 24: Նաև՝ Մեծ պատերազմը և հայ ժողովուրդը, Կ.Պոլիս, 1920, էջ 5-7:

[3] Տե՛ս Լեո. Թուրքական հեղափոխության գաղափարաբանությունը, հ. Բ, Փարիզ, 1935, էջ 113:

[4] Архив внешней политики России (այսուհետև՝ АВПР), ф., Политархив, 1914г., оп. 1, д. 34-64, лл. 12-16.

[5] Նույն տեղում, թթ. 36-38:

[6] Փափազյան Վ. Իմ հուշերը, հ. Բ, Բեյրութ, 1952, էջ 282:

[7] Տե՛ս Սասունի Կ. Տաճկահայաստանը ռուսական տիրապետության տակ, 1914-1918թթ., Բոսթոն, 1927, էջ 26:

[8] Երեմյան Հ. Հուշարձան Վան-Վասպուրականի, Ալեքսանդրիա, 1929, էջ 320:

[9] Թումանյան Հ. Ուսումնասիրություններ և հրապարակումներ, Եր., 1964, հ. 2, էջ 354:
[10] Թումանյան Հ. Երկերի ժողովածու, Եր., 1995, հ. 1, էջ 268:
[11] Տե՛ս «Ցիրենի», Թիֆլիս, 1914 ,էջ 10:
[12] Տե՛ս Российский Государственный Военно-Исторический Архив (այսուհետև՝ РГВИА), ф. 2000, оп. 1, д. 3797, лл. 1-2:
[13] Տե՛ս Կարապետյան Մ. Հայկական կամավորական խմբերը և ազգային գումարտակները Կովկասյան ռազմաճակատում (1914-1917թթ.), Եր., 1999, էջ 62:
[14] Տե՛ս Հայաստանի Հանրապետության պատմության պետական արխիվ (այսուհետև՝ ՀՀ ՊԿՊԱ), ֆ. 121, g. 1, գ. 16, թ. 3-5:
[15] Տե՛ս նույն տեղում, գ. 9, թ. 78-79:
[16] Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 121, g. 1, գ. 16, թ. 3:
[17] Տե՛ս РГВИА, ф. 551, оп. 3, д. 20, նաև д. 9, л. 200:
[18] Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, g. 5, գ. 56, թ. 2: Կովկասյան ճակատում հայ կամավորական խմբերի մարտական գործունեության մասին հանգամանորեն տե՛ս Կարապետյան Մ. Հայկական կամավորական խմբերը և ազգային գումարտակները Կովկասյան ռազմաճակատում (1914-1917թթ.), Եր., 1999:
[19] Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր, Եր., 1967, էջ 173:
[20] Готлиб В. Тайная дипломатия во время Первой мировой войны, М., 1960, с. 153. Տե՛ս նաև Лудшувейт Е. Турция в годы Первой мировой войны 1914-1918гг., М., 1966, с. 25-33.
[21] Ավետիսյան Հ. Հայկական հարցը 1918 թվականին, Եր., 1997, էջ 25:
[22] Նույն տեղում, էջ 23-24:
[23] РГВИА, ф. 2000, оп. 1, д. 3851, лл. 9-11:
[24] Լազյան Գ. Հայաստան և հայ դատը հայ և ռուս հարաբերություններու լույսին տակ, էջ 180:
[25] Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 221, g. 1, գ. 21, թ. 24-35: Տե՛ս նաև «Հորիզոն», 1917, 18 հոկտեմբերի:
[26] Նույն տեղում:
[27] Նույն տեղում:
[28] Նույն տեղում:
[29] Նույն տեղում:
[30] Նույն տեղում:
[31] Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 121, g. 1, գ. 3, թ. 12-19:
[32] Տե՛ս նույն տեղում, գ. 16, թ. 3-5:

Резюме

Участие армян в Первой мировой войне на Кавказском фронте и добровольческое движение.

Мурад Карапетян

Армяне приняли самое активное участие в Первой мировой войне: Подовная активность имела свои объективные причины. Вступая в войну с Турцией Россия провозгласила своей целью решение "Армянского вопроса", в рамках которого гарантировала проведение реформ на территории Западной Армении, в частности-предоставление автономии шести вилайетам, в основном населенным армянами, и "неразрывно связанной с ним" Киликии.

Широкий размах добровольческого движения возглавляли видные деятели армянского национально-освободительного движения Андраник, Дро, Кери, Амазасп, Вардан, князь Аргутинский. Добровольческие дружины (всего их было 7) приняли активное участие в боевых действиях на

Кавказском фронте, оказали существенную помощь русской армии в деле освобождения Западной Армении.

В 20-ые годы, со стороны правящей идеологии, армянское добровольческое движение было квалифицировано как националистическое, посовническое захватнической и колониальной политике русского царизма. В то же время, со стороны турецких историков, политиков, дипломатов, публицистов широко распространялись "мысли" о том, что якобы армянское добровольческое движение послужило причиной армянских погромов в 1915 году. Однако многочисленные факты и новоявленные документы убедительно доказывают, что армянские погромы 1915 года были заранее спланированным и организованным на государственном уровне актом Геноцида. Более того, факты показывают, что во многих местах Западной Армении армянские добровольцы предотвращали погромы и, спасая от погромов, сопровождали в Закавказье десятки тысяч армян.

Summary

The Participation of Armenians in World War I on the Caucasian Front and the Volunteer Movement

Murad Karapetyan

Armenians have taken a most active part in World War I. Such activity had its objective reasons. Engaged in the war with Turkey, Russia proclaimed its aim the solution of the "Armenian Question", in the frames of which Russia warranted quarrying out reforms in Western Armenia, particularly those giving autonomy to the 6 vilayets populated mainly with Armenians, and "indissolubely tied to it" Cilicia.

The wide scope of the volunteer movement was led by prominent figures of the Armenian national-liberation movement: Andranik, Kery, Hamazasp, Vardan, prince Argutinski. The volunteer squads (7 in number) took active part in military actions at the Caucasian front, rendered vital assistance to the Russian army during the liberation of Western Armenia.

In 1920's the ruling ideology qualified the Armenian volunteer movement as a nationalistic one supporting the expansionist and colonial policy of the Russian tsarism. At the same time somi Turkish historians, politicians, diplomats, publicists spread "ideas", that the Armenian volunteer movement ostensibly caused the massacres of Armenians in 1915. Meanwhile, numerous facts and newly brought to light documents prove cogently that the Armenian massacres of 1915 were planned and organized at state level as acts of Genocide and they are not anyhow resulted by the volunteer movement. Moreover, the facts show that in many places of Western Armenia the volunteers prevented the massacres, and rescued tens of thousands of Armenians convoying them to Transcaucasus.